ման արդյունքում թմրամիջոցների գլոբալ խնդրի լուծման արդյունքը պետք է լինի թմրամիջոցների և հոգեմետ նյութերի անօրինական արտադրության, շրջանառության կամ օգտագործման կանխարգելումները (կամ էլ ծայրահեղ դեպքում էական կրճատումները) և բժշկական ու գիտական նպատակներով վերահսկվող նյութերի առկայության ապահովմանն աջակցելը:

Բժշկական և գիտական նպատակներով վերահսկվող նյութերի առկայության ապահովումը թմրամիջոցների վերահսկման համակարգի հիմնարար նպատակն է, և թմրամիջոցների միջազգային վերահսկման համաձայնագրերի մասնակից պետության պարտավորությունը: Բժշկական նպատակներով հոգեմետ նյութերի օգտագործումն անհրաժեշտ է հիվանդի մոտ ցավը և հոգեկան ապրումները թեթևացնելու համար, և մասնակից-պետությունները կրում են պատասխանատվություն՝ պատշաճ կերպով նրա առկայությունն ապահովելու համար, իսկ Կոմիտեն լիազորված է հետևելու այդ ամենի օրինականությանը:

Կոմիտեն՝ օգտվելով իր մանդատի շրջանակներում անդամ-պետությունների կողմից վերահսկվող նյութերի լեգալ օգտագործմանը գնահատական տալու իրավունքից, նշել է, որ տարբեր տարածաշրջաններում պատկերը տարբեր է: Վերջին 20 տարում Կոմիտեն մեծ ուշադրություն է դարձրել այս հանգամանքին և իրադրությունը ուղղելու համար հրահանգել է կարգավորել երկրի կառավարությունների և համապատասխան շահագրգիռ կողմերի հարաբերությունները: Ափիոնի խմբին պատկանող ցավազրկողների (անալգետիկների) վերաբերյալ պետք է նշել, որ որոշ երկրներում (Լատինական Ամերիկա, Արևմտյան, Արևելյան և Հարավ-արևելյան Ասիա) առկա է թմրանյութ պարունակող դեղամիջոցների ցածր մատակարարում կամ այն բացակայում է ընդհանրապես. և եթե հիվանդին ուժեղ ցավազրկող դեղամիջոց անհրաժեշտ լինի, անհրաժեշտ բժշկական օգնությունը դառնում է անմատչելի, այս ամենը այն դեպքում, երբ ամբողջ աշխարհի պահուստային մոնիթինգի 92%-

ից 17%-ը օգտագործում է հատկապես Հյուսիսային Ամերիկայի, Օվկիանոսայի և Արևմտյան Եվրոպայի հանրությունը:

Ափիոնի հումքի ծավալը բավարար է դրանից դեղամիջոց պատրաստելու համար. բայց դրա պահանջարկի մակարդակը զգալի ցածր է և այն մատչելի ու հասանելի դարձնելու համար Կոմիտեն կոչ է անում անդամ-երկրներին լուծել դրա հետ կապված խնդիրները, որոնցից են իրավական-նորմատիվային կարգավորումները, ափիոնիդների նկատմամբ վերաբերմունքն ու գիտելիքների մակարդակը, տնտեսական գործոնները և գնման ընթացակարգերը, համագործակցել թե՛ միմյանց, թե՛ Միջազգային Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության (ԱՀԿ /BO3/) հետ, միաժամանակ հայտարարում իր պատրաստակամությունը և պատրաստակամությունը մշտապես այս խնդիրներին դրական արդյունք ապահովելու համար:

*2. Պահանջարկի կրճատում և դրա հետ կապված միջոցառումներ:*

Թմրամիջոցների դեմ պայքարի ընդգրկուն, համալիր և հավասարակշիռ մոտեցման սկզբունքի ծագումն ու զարգացումը սերտորեն կապված է թմրամիջոցների պահանջարկի կրճատման վրա լուրջ ուշադրություն դարձնելու և այդ կողմորոշումը հիմնական գործունեության մեջ ներառելու անհրաժեշտության հետ:

Կոմիտեն նշել է, որ թմրամիջոցների անօրինական առաջարկի դադարեցումը և պահանջարկի կրճատումը ունեն փոխլրացնող փոխազդեցություն: Այս երկու նպատակների իրականացման համար պահանջվում են բազմաթիվ մոտեցումներ: Միջազգային մակարդակով պետք է սահմանել իրավական շրջանակներ՝ հակազդելու թմրամիջոցների անօրինական պատրաստմանը, արտադրությանը, տեղափոխմանը, շրջանառությանն ու արտահոսքին: Նախազգուշական նպատակների համար, թմրամիջոցների անօրինական օգտագործման ու չարաշահման համար պահանջվում է այնպիսի կոմունիկացիոն ռազմավարություն, որտեղ հաշվի է առնվում բնակչության թիրախային խմբերի սոցիալական, մշակութային և տնտե-

սական առանձնահատկությունները: Բացի դրանից, թմրամիջոց չարաշահող անձանց բուժումը և ռեաբիլիտացիան կարող է իրականացվել միայն յուրաքանչյուր երկրում առկա սոցիալ-մշակութային համատեքստում:

Որպես քաղաքականության նպատակներից մեկի՝ պահանջարկի կրճատմանը հասնելու համար պետք է հասկանալ, որ թմրամոլությունն իրենից ներկայացնում է առողջության բազմագործոն խանգարում, որը պահանջում է գիտական հիմնավորված մոտեցում և կանխատեսում է բազմաբնույթ համալիր միջոցառումների կիրառում, որը կապահովի ծառայությունների լայն միջակայք՝ առողջապահության համակարգի շրջանակներում ու սոցիալ ապահովագրման լուսավորման, կանխարգելման և խնամքի ուղղությամբ, սկսած նախնական կանխարգելումից ու վաղ միջամտությունից մինչև բուժում, վերականգնում և սոցիալ ռեինտեգրացիա: Այսպիսի ծրագրերի հասանելիությունը չպետք է տրամադրվի խտրականության հիմքի վրա: Թմրամիջոցների պահանջարկի խնդրին ընդգրկուն մոտեցումը ենթադրում է տարբեր օբյեկտների մասնակցություն և փոխազդեցություն, ներառելով կրթական և կրոնական ինստիտուտները, առողջապահական ու սոցիալ-ապահովագրական մարմինները, արդարադատությունը և այլն:

### 3. Առաջարկի կրճատում:

Առաջարկի կրճատման ռազմավարությունը և միջոցները կոչված են ապահովելու թմրամիջոցների և հոգեմետ նյութերի քանակի էական կրճատումը կամ վերացումը, որոնք հասու են ոչ անօրինական օգտագործողների համար: Իրավապահ մարմինների, դատական մարմինների համագործակցության և կայուն այլընտրանքային զարգացման ծրագրերի ջանքերի հիման վրա առաջարկի կրճատման միջոցառումները ուղղված են արգելված մշակաբույսերի աճեցման, հսկվող նյութերի անօրինական արտադրության և շրջանառության հետ կապված կազմակերպված հանցավոր խմբերի վերացման պայքարի ուղղությամբ:

Առաջարկի կրճատման ոլորտի առաջընթացը կախված է մի

շաք գործոններից: Ամենագլխավորը՝ առաջարկի կրճատման ոլորտի քաղաքականության մշակումն ու արդյունավետ իրականացումն է, որը հիմնված է համապատասխան ազգային օրենսդրության վրա: Այն ամբողջովին համաձայնեցված է թմրամիջոցների վրա միջազգային վերահսկման երեք պայմանագրերի դրույթներին և անհրաժեշտ օրենսդրական հիմք է ապահովում միջազգային համագործակցության և տեխնիկական օգնության համար: Ըստ 2009թ. Գործողությունների ծրագրի՝ մյուս գործոններից է ինֆորմացիայի փոխանակման, մոնիտորինգի, հսկման անհամապատասխանությունը, իրավապահ գործունեության չհամակարգված աշխատանքը, այդ թվում նաև ռեսուրսների դուրսգրման գործընթացի անկայունությունը և դրանց անբավարարությունը:

Առողջապահության ոլորտում, գլխավոր սպառնալիքներից են վերջին տարիներին ի հայտ եկած հոգեմետ նյութերը, որոնք չեն վերահսկվում: Սրանք առաջարկվում են հսկվող նյութերին որպես այլընտրանքային «օրինական» կամ «բնական» նյութեր: Այս նյութերի քանակի վերաբերյալ ստույգ տվյալներ չկան, սակայն ըստ ՄԱԿ-ի թմրամիջոցների և հանցագործության կառավարման (ԹՀԿ) վերջին չորս տարվա ընթացքում այդ նյութերի օգտագործման քանակությունը կրկնապատվել է՝ գերազանցելով միջազգային վերահսկման տակ գտնվող թմրանյութերի քանակությանը: Կառավարության հակազդման հնարավորության սահմանափակումը կայանում է այս նյութերի ճիշտ ժամանակին բացահայտելու բարդության մեջ, որը պայմանավորված է նրանով, որ նրանք շատ արագ են թափանցում շուկա, ընդ որում բազմազան ուղիների միջոցով և ունեն ոչ միատեսակ քիմիական բաղադրություն, հատկապես եթե հաշվի առնենք, որ շատ երկրներ հագեցած չեն տեխնիկական և դեղագիտական տվյալներով, տեղեկատու նյութերով, բացակայում է բավարար դատափորձագիտական և թունագիտական պոտենցիալը: Միջազգային պայմանագրերում գործող իրավական հիմքերը թույլ են տալիս պետություններին ազգային մակարդակով ավելի լայն

միջոցառումներ ձեռնարկել այս չարիքի դեմ, քան նախատեսված է միջազգային չափանիշներով:

*4. Սոցիալ-տնտեսական ասպեկտներ:*

Թմրամիջոցների հետ կապված գլոբալ խնդիրների վրա ազդող թմրամիջոցների պահանջարկի և առաջարկի ու այդ երկու ասպեկտների փոխադարձ կապի առկայությամբ պայմանավորված սոցիալ-տնտեսական գործոնների թվին է պատկանում աղքատությունը և սննդի անվտանգության բացակայությունը, տնտեսական անհավասարությունը, սոցիալական մեկուսացումը, մարդկանց միգրացիայով պայմանավորված գրկանքները, ուսումնակրթական հաստատությունների անբավարարությունը և զբաղվածության բնագավառի հեռանկարների բացակայությունը, ծնողների հոգածության և մասնակցության պակասությունը, բռնություններին ենթարկվելը և չարաշահումները:

*5. Սոցիալ-մշակութային ասպեկտներ:*

Մշակութային ավանդույթները ևս էապես կարող են հակազդել թմրամիջոցների համաշխարհային խնդիրներին:

Մարդկանց պատկերացումների մեջ արգելված թմրամիջոցների մասին փոփոխություններ առաջ բերելը երբեմն կարող է դիտվել որպես կանխարգելիչ միջոց, թեև այստեղ որոշիչ դեր է խաղում թմրամիջոցների վերահսկման քաղաքականության ընդհանուր կառուցվածքը, և թե այն ինչպես է մատուցվում:

Ինչպես կոռուպցիայի դեմ պայքարի երևույթի դեպքում, այնպես էլ այս դեպքում, թմրամիջոցների գլոբալ խնդիրն հաջողությամբ հակազդելու գլխավոր կայուն տարրը կանխարգելման մշակութի ձևավորումն է: 1997թ. Կոմիտեն շեշտել է, որ թմրամիջոցների չարաշահումը չպետք է ուղեկցվի քարոզչությամբ, սակայն մինչ օրս դրանք մնում են ակտուալ: Ուստի, անհրաժեշտ է գտնել ճիշտ հարաբերակցություն աշխարհայացքի ձևավորման աշխատանքի և արգելված թմրամիջոցների առկայության սահմանափակման ջանքերի միջև:

*6. Անվտանգություն և կայունություն:*

Անվտանգության և կայունության ապահովումը գլխավոր

պահանջներն են, որոնք անհրաժեշտ են թե՛ ազգային և միջազգային խնդիրների լուծման համար, որոնք ունեն տնտեսական, սոցիալական, մշակութային կամ հումանիտար բնույթ, և թե՛ մարդու իրավունքների խրախուսման և հետևողականության համագործակցության համար: Բռնություններն ու կոռուպցիան իրավապահության հիմքերը խարխալում են, ցուցաբերում են անկայունացնող ազդեցություն, խանգարում օրենքի գերակայությանը, երբեմն էլ ծնում կոնֆլիկտներ: Բռնությունը չի հանդիսանում անլեզալ թմրաբիզնեսի պարտադիր ասպեկտը, սակայն այն կարող է ծագել որոշակի պայմաններում: Թմրաբիզնեսի հետ կապված բռնությունները, որպես կանոն՝ այն երկրներում են հանդիպում, որտեղ պետական վերահսկողությունը շատ թույլ է, երկրի կոնկրետ գերատեսչություններ չեն տիրապետում իրենց քաղաքացիների և օրենքի պահպանման ողջ պոտենցիալին, իսկ իրավական նորմերին հետևելու մակարդակը բավականաչափ ցածր է, քանի որ օրենսդրությունը՝ ինչպես երևում է, բավարարում է միայն առանձին խմբերի շահերը, իսկ գերատեսչությունները, որոնց ֆունկցիայի մեջ է մտնում այդ նորմերի իրականացումը, կոռուպցիայի, անպատժելիության և անկողմնակալության բացակայության պատճառով արժանացել է վստահության պակասի: Ինչպես ցույց է տալիս կազմակերպված հանցավոր խմբերի պատմությունը, բռնության և կոռուպցիայի կիրառմանը դրդող պայմանները, հաճախ հանդիսանում են թմրամիջոցների խնդրի ծագման և տարածման նախապայման: Անհանգստությունները, որոնք կապված են այնպիսի լուրջ խնդիրների հետ, ինչպիսին թմրամիջոցների անօրինական շրջանառությունն է, կոռուպցիան, անդրազգային կազմակերպված հանցագործության այլ ձևերը, մարդկանց առևտուրը, հրագենի ապօրինի վաճառքը, կիբեռ-հանցագործությունը, տեռորիզմը և տեռորիզմին ֆինանսավորող փողերի լվացումը և այլն, արտացոլված են Գլխավոր ասամբլեայի երկու քաղաքական հռչակագրերում և հաստատվել թմրամիջոցների միջազգային խնդրի դեմ պայքարի գլոբալ

համագործակցության վերաբերյալ իր ամենամյա համաձայնագրերում:

Բոլոր հոշակագրերի, գործողությունների ծրագրերի և համաձայնագրերի մեջ, որտեղ ընդգծվում է թմրանյութերի գլոբալ խնդրի լուծման ընդգրկուն, համալիր և հավասարակշիռ մոտեցման սկզբունքը, ընդհանուր տարրը՝ մարդու իրավունքի բնագավառում նորմերի կայուն պահպանմանը հետամուտ լինելն է: Մարդու իրավունքները կարմիր թելի պես անցնում են թմրամիջոցների միջազգային վերահսկման ողջ քաղաքականության միջով, հատկապես երբ այն առնչվում է պահանջարկի և առաջարկի կրճատման և միջազգային համագործակցության հատվածին:

Հայաստանն անմասն չի մնում երկրագնդի բնակչության առջև ծառայած թմրամիջոցների օգտագործմամբ և ապօրինի շրջանառությամբ պայմանավորված տարեցտարի ահագնացող հիմնախնդիրներից: Ինչպես ողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում վերջին տարիներին նկատվում է երկրի բնակչության կողմից ապօրինի թմրամիջոցներ օգտագործող մարդկանց թվի աճ և թմրամիջոցների նոր ու վտանգավոր տեսակների տարածում:

«Ոսկե կիսալուսնի» երկրներից (Աֆղանստան, Պակիստան, Իրանի Իսլամական Հանրապետություն) Հայաստանը սահմանակից է ԻԻՀ-ին, որի հետ ունի տնտեսական և մշակութային լայն կապեր:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը, քաջ գիտակցելով միջազգային թմրաբիզնեսի համար տարանցիկ ուղի դառնալու հնարավորությունը, ձգտում է բարելավել և ուժեղացնել թմրամիջոցների ապօրինի շրջանառության կանխարգելման աշխատանքները՝ աստիճանաբար բարելավելով և հզորացնելով հանրապետությունում թմրամիջոցների առաջարկի և պահանջարկի նվազեցման ոլորտներում իրականացվող միջոցառումները:

Նախկինում, ի տարբերություն հիմնականում տեղի բնակ-



չույթյան կողմից աճեցվող և պատրաստվող կաննաբինոիդների խմբի թմրամիջոցների, ափիոնի խմբին պատկանող նյութերը Հայաստան էին ներմուծվում արտերկրից: Վերջին տարիներին պատկերը փոքր-ինչ փոխվել է. ավելացել են թմրամիջոցներ օգտագործող անձանց կողմից օրինական շրջանառության մեջ գտնվող կողեին պարունակող դեղերից տնայնագործական պայմաններում պատրաստվող, ափիոնի դասի նյութերին պատկանող դեգոմորֆինի ներերակային օգտագործման դեպքերը:

Ազգաբնակչության շրջանում ապօրինի թմրամիջոցների օգտագործման հետ կապված իրավիճակի գնահատման հիմնական աղբյուրը հանրապետության նարկոլոգիական ծառայությունների կողմից թմրամիջոցներ օգտագործողների հաշվառման վերաբերյալ տվյալներն են: Իրավիճակի գնահատման ևս մեկ կարևոր աղբյուր է 2010 թ.-ին «ԶԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացված «Հայաստանի Հանրապետությունում սեռական ծառայություններ տրամադրող կանանց, տղամարդկանց հետ սեռական հարաբերություններ ունեցող տղամարդկանց, թմրամիջոցների ներերակային օգտագործողների չափերի գնահատում» հետազոտությունը, որի միջոցով գնահատվել է միայն թմրամիջոցների ներերակային օգտագործողների թիվը հանրապետությունում:

Համաճարակաբանական տվյալներն ու տեղեկություններն ամբողջությամբ հավաքագրելով և վերլուծելով՝ հանրապետությունում թմրամիջոցների օգտագործման իրավիճակի վերաբերյալ կարելի է կատարել մի քանի կարևոր եզրակացություններ: Այսպես, մի կողմից, ափիոնի և մորֆինի ֆարմակոլոգիական անալոգների խմբին պատկանող նյութերի (հերոին, մորֆին, մեթադոն, բուպրենորֆին, ֆենտանիլ) մատչելիության նվազման պատճառով թմրամիջոցներ օգտագործողները ստիպված են լինում դադարեցնել թմրամիջոցների օգտագործումը (ինքնուրույն դադարեցնել, դիմել բժշկական օգնության, անցնել այլ հոգեներգործուն նյութերի կամ ալկոհոլի օգտագործում), մյուս կողմից էլ թմրամիջոցներ օգտագործողների մի ստվար մաս

անցնում է օրինական շրջանառության մեջ գտնվող կողեին պարունակող դեղերից տնայնագործական պայմաններում պատրաստվող առավել հասանելի դեզմոնոֆինի օգտագործմանը:

2014թ.-ին հաշվառված թմրամիջոց օգտագործողների թվաքանակը դրսևորել է նվազման միտում: Համեմատության համար արժե փաստել, որ 2014թ. ընթացքում նարկոլոգիական ծառայությունների կողմից կյանքում առաջին անգամ հաշվառվել են 574 անձ, ի տարբերություն 2013 թվականի ընթացքում հաշվառված 728-ի:

Հարկ է նշել տարբեր գերատեսչությունների և կազմակերպությունների ակտիվությունը թմրամիջոցների օգտագործման կանխարգելմանն ուղղված միջոցառումների իրականացման հարցում: Բայց պետք է փաստել, որ գործողությունների հիմնական մասը ներառում են տեղեկատվական-լուսավորչական միջոցառումներ և առանձին ակցիաներ: Հատկապես բնակչության խոցելի խմբերում թմրամիջոցների օգտագործման կանխարգելմանն ուղղված գործողությունների իրականացման ուղղությամբ անհրաժեշտ է մշակել ու մշտապես իրականացնել համակարգված և ծրագրված արդյունավետ միջոցառումներ:

Հանրապետության երեք խոշոր քաղաքներում՝ Երևանում, Գյումրիում և Վանաձորում իրականացվող վնասի նվազեցման ծրագրերի շնորհիվ թմրամիջոցներ օգտագործողների շրջանում ՄԻԱՎ-ի և արյան միջոցով փոխանցվող այլ վարակների տարածվածությունը հնարավոր է լինում պահպանել հարաբերական հաստատուն մակարդակի վրա և արդյունավետորեն իրականացնել վարակների տարածման վտանգների վերահսկում: Սակայն վնասի նվազեցման ծրագրերը կարիք ունեն հետագա կատարելագործման և թմրամիջոցներ օգտագործողների համար առավել մատչելի դառնալու խնդիր:

Նարկոլոգիական ծառայություններ տրամադրող հաստատությունների և վնասի նվազեցման ծրագրեր իրականացնող կազմակերպությունների միջև համագործակցությունը պետք է հստակեցվի և դերաբաշխում կատարվի:

Թմրամիջոցներից կախվածության բուժման վերաբերյալ տվյալներն ու տեղեկությունները վերլուծելիս կարելի է փաստել, որ վերջին վեց տարիներին թմրամիջոցներ օգտագործողների կողմից նարկոլոգիական բուժման պահանջարկը դրսևորել է կտրուկ աճի միտում: Դա, առաջին հերթին, պայմանավորված է եղել 2008 թվականին առանց բժշկի նշանակման թմրամիջոց օգտագործելու համար նախատեսված պատժի ապաքրեականացմամբ, ինչպես նաև տրամադրվող նարկոլոգիական ծառայությունների որակի բարելավմամբ՝ հատկապես, 2009 թվականին մեթադոնային փոխարինող բուժման (ՄՓԲ) ներդրման հետ:

Թմրամիջոցների գործածմամբ պայմանավորված հիվանդությունների բուժման նպատակով հանրապետության նարկոլոգիական բուժօգնություններ ընդունված անձանց թվաքանակը ռեկորդային է եղել 2010 թվականին (317 դեպք): 2011թ.-ին՝ 206 դեպք, այսինքն՝ 2010թ.-ի համեմատ գրանցվել է նարկոլոգիական բուժօգնությունների ընդունման դեպքերի նվազման միտում: 2012 թվականին նարկոլոգիական ստացիոնար բուժում ստացող հիվանդների թվի էական փոփոխություն չի դիտվել (212 դեպք) և գրեթե նույնությամբ կրկնվել են 2008թ. (198 դեպք), 2009թ. (209 դեպք) և 2011թ.-ի ցուցանիշները: 2013թ.-ին նարկոլոգիական բուժում ստացողների թվաքանակը փոքր-ինչ նվազել է՝ կազմելով 187 դեպք, իսկ 2014թ.-ին թմրաբանական ստացիոնար բուժում ստացողների թվաքանակը աճել է՝ կազմելով 263 դեպք: Մինևնույն ժամանակ բուժման ընդունված հիվանդների շրջանում տարեցտարի շարունակվում է նկատվել տնայնագործական պայմաններում կողեին պարունակող դեղերից պատրաստվող դեզոմորֆին օգտագործող անձանց թվի աճ:

Թմրամիջոցներից կախվածություն ունեցող անձանց տրամադրվող ծառայությունների ցանկում 2009 թվականին փոխարինող բուժման ներդրումը կարելի է համարել մեծ առաջընթաց նարկոլոգիական բուժօգնության բարելավման ուղղությամբ: 2014 թվականի տարեվերջի դրությամբ մեթադոնային փոխարին-

նող բուժման (ՄՓԲ) ծրագրեր են իրականացվում հանրապետության երեք քաղաքներում՝ Երևանում, Գյումրիում և Վանաձորում, ինչպես նաև ՀՀ արդարադատության նախարարության ՔԿՎ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿ հիմնարկում և մի քանի այլ ՔԿՀ-ներում ՄՓԲ տրամադրելով ընդհանուր առմամբ 400 ափիոնի դասին մոտ նյութերից կախվածություն ունեցող հիվանդների:

Չնայած հանրապետությունում տրամադրվող նարկոլոգիական բուժօգնության որակի վերջին տարիների նշանակալի բարելավմանը, այնուամենայնիվ, այն կարիք ունի շարունակական կատարելագործման՝ դրանք Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) և ՄԱԿ-ի Թմրամիջոցների ու հանցավորության գրասենյակի (ՄԱԿԹՀԳ) կողմից առաջարկվող սկզբունքներին և ստանդարտներին համահունչ դարձնելու նպատակով: Առաջին հերթին, խոսքը որակյալ հոգեբանական և սոցիալական աջակցության ծառայությունների, ինչպես նաև վերականգնողական բուժման ծառայության ներդրման և կատարելագործման անհրաժեշտության մասին է: Հարկ է հատուկ նշել նաև, որ անհրաժեշտություն կա ափիոնատիպ նյութերից կախվածություն ունեցող անձանց տրամադրվող ՄՓԲ-ն մատչելի դարձնել առավել մեծ թվով հիվանդների՝ հասանելի դարձնելով դրանք նաև հեռավոր մարզերում բնակվող հիվանդներին և վերացնելով թմրամիջոցներից կախվածություն ունեցող անձանց ՄՓԲ ծրագրեր ընդգրկմանը խանգարող խոչընդոտները:

Հանրապետությունում թմրամիջոցների առաջարկի ոլորտում կանխարգելիչ միջոցառումներն իրականացնում են ՀՀ ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչության (ԿՀԴՊԳՎ) թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի (ԹԱՇԴՊՎ), ՀՀ ոստիկանության տարածքային ստորաբաժանումների, ՀՀ ԿԱ ԱԱԾ, ՀՀ ԿԱ ԱԱԾ պետական սահմանի պահպանության գլխավոր վարչության և ՀՀ ԿԱ ՊԵԿ մաքսանենգության դեմ պայքարի և կրկնակի մաքսային հսկողության վարչության ուժերով:

Իրավապահ մարմինների գործադրած ջանքերի շնորհիվ, հանրապետությունում թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ տարվող պայքարի ոլորտը կայուն է, իսկ թմրամիջոցների հետ կապված իրավիճակը՝ վերահսկելի: Թմրաբիզնեսի կազմավորման և մշտական գործող հանցավոր խմբեր հանրապետության տարածքում գոյություն չունեն:

Իրավապահ մարմինների կողմից 2014 թվականի ընթացքում թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության դեմ տարվող պայքարի ուղղությամբ ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում 2014 թվականին հայտնաբերված թմրամիջոցների հետ կապված հանցագործությունների և իրավախախտումների դեպքերի քանակը, 2013 թվականի ընթացքում հայտնաբերված դեպքերի թվաքանակի համեմատ՝ նվազել է:

Սակայն անհրաժեշտ է փաստել նաև, որ թմրամիջոցների և թմրամոլության վերաբերյալ տվյալների հավաքագրման, մոնիտորինգի և հետագա վերլուծության ողջ համակարգը պահանջում է արմատական բարեփոխումներ և զարգացումներ՝ հնարավորինս համապատասխանեցնելով այն 2000 թվականին Լիսաբոնյան համաձայնությամբ ընդունված սկզբունքներին և ստանդարտներին, առաջնորդվելով ՄԱԿԹՀԳ-ի, Թմրամիջոցների և թմրամոլության մոնիտորինգի եվրոպական կենտրոնի (ԹԹՄԵԿ) մեթոդական ձեռնարկներով և ուղեցույցներով:

Թմրամիջոցների և թմրամոլության տեղեկատվական և համաձայնագրական ազգային համալիր (միասնական) համակարգն անհրաժեշտ է Լիսաբոնյան համաձայնությամբ ընդունված ստանդարտներին համապատասխանող օբյեկտիվ, հուսալի և համադրելի տվյալների հավաքագրման, մոնիտորինգի, վերլուծության և զեկույցների հրապարակման համար, որի միջոցով հնարավոր կլինի մշտադիտարկել, վերլուծել և գնահատել հանրապետությունում ապօրինի թմրամիջոցների օգտագործման հետ կապված իրավիճակը, թմրամիջոցների պահանջարկի և առաջարկի նվազեցմանն ուղղված միջոցառում-

ներն ու իրականացվող գործողությունները, այդ թվում իրականացնել 5 առանցքային համաճարակաբանական ցուցանիշների գնահատում.

1. Թմրամիջոցների օգտագործման տարածվածության ուսումնասիրություններ ազգաբնակչության, երիտասարդների և առավել ռիսկային խմբերի շրջանում,

2. Թմրամիջոցների օգտագործողների թվաքանակի գնահատում (ներերակային թմրամիջոցներ օգտագործողներ, «ծանր» թմրամիջոցների՝ ափիոնի դասին պատկանող նյութերի, կոկաինի, ամֆետամինների չարաշահողներ,

3. Թմրամիջոցներ օգտագործողների շրջանում վարակիչ հիվանդությունների տարածվածության գնահատում (հեպատիտ C, B և ՄԻԱՎ վարակ),

4. Թմրամիջոցներ օգտագործողների շրջանում մահացության, ինչպես նաև թմրամիջոցների օգտագործմամբ ուղղակիորեն և անուղղակիորեն պայմանավորված մահացության գնահատում, հանրային առողջության համար վտանգավոր (ռիսկային) նոր թմրամիջոցների վաղ հայտնաբերում,

5. Հանրապետությունում տրամադրվող նարկոլոգիական բուժման պահանջարկի գնահատում, ինչպես նաև նարկոլոգիական ծառայությունների, տրամադրվող նարկոլոգիական բուժման տեսակների որակի և արդյունավետության գնահատում ու համեմատություն միջազգային հեղինակավոր կազմակերպությունների՝ ԱՀԿ և ՄԱԿԹՀԳ կողմից առաջարկվող ստանդարտների հետ:

Հայաստանի Հանրապետությունը չի համարվում թմրամիջոցներ արտադրող հիմնական երկիր, իսկ թմրամիջոցների օգտագործման ներքին ծավալները հարևան երկրների հետ համեմատած, ցածր են: Հայաստանի և հարևան երկրների միջև ներկայիս սահմանափակ շարժը, երկիրը դարձնում են թմրամիջոցների շրջանառության երկրորդական ուղի: Չնայած այս ամենին, Հայաստանը գտնվելով «Եվրոպայի և Ասիայի խաչմերուկ» աշխարհագրական դիրքում, և համարվելով աշխարհին թմրա-

միջոցներ մատակարարող գլխավոր տարածաշրջաններից մեկի հետ հարևան, չի բացառվում միջազգային թմրաբիզնեսի համար Հայաստանի տարանցիկ ուղի դառնալու հավանականությունը:

Թմրամիջոցների շրջանառության նկատմամբ հսկողության ոլորտում ՀՀ պետական ռազմավարությունն ուղղված է թմրամիջոցների վաճառքով զբաղվող կազմակերպված միջազգային հանցավոր խմբերի կողմից երկրի տարածքը թմրամիջոցների մաքսանենգության նպատակով օգտագործման կանխմանը, միջազգային պարտավորությունների կատարմանը և թմրամիջոցների օրինական շրջանառության նկատմամբ խիստ հսկողությանը, թմրամիջոցների անօրինական շրջանառության նկատմամբ արդյունավետ պայքարի ապահովմանը, ազգաբնակչության, երիտասարդների, հատուկ խմբերի շրջանում թմրամիջոցների առաջարկի և պահանջարկի նվազեցմանը, ինչպես նաև այս ոլորտում միջազգային համագործակցության ընդլայնմանը:

ՀՀ նախագահի 2009 թվականի սեպտեմբերի 25-ին ՆԿ-162-Ն կարգադրությամբ հաստատվել է «2009–2012 թվականների ընթացքում ՀՀ-ում թմրամիջոցների և թմրամոլության դեմ պայքարի ազգային ծրագիրը»:

Ծրագրի հիմնական խնդիրներն են.

1. Թմրամիջոցների ապօրինի շրջանառության և դրա հետ կապված հանցագործությունների նախականիման և բացահայտման ուղղությամբ պետական մարմինների գործունեության արդյունավետության բարձրացումը,

2. Թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարը կանոնակարգող ՀՀ օրենքների և այլ իրավական ակտերի կատարելագործումը, դրանց ներդաշնակեցումը ՀՀ միջազգային պայմանագրերի պահանջներին,

3. Թմրամիջոցների և թմրամոլության վերաբերյալ միասնական տեղեկատվական համակարգի ներդրումը և կատարելագործումը,

4. Թմրամոլության առաջնային նախականիումը,

5. Թմրամիջոցներից կախում ունեցող անձանց բուժման արդյունավետ կազմակերպումը, նարկոլոգիական ծառայության արդիականացումը և սոցիալական վերականգնման համակարգի ներդրումը,

6. Թմրամոլության կանխարգելման և բուժման ոլորտում մասնագիտացած բժշկական կազմակերպությունների ներուժի զարգացումը, նրանց անձնակազմերի վերապատրաստման ծրագրերի կատարելագործումը և գիտական-տեղեկատվական պատշաճ հազեցվածության ապահովումը,

7. Թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ոլորտում միջազգային, ինչպես նաև միջգերատեսչական համագործակցության ամրապնդումը:

Ամփոփելու համար փաստենք, որ 2016թ.-ին նախատեսված ՄԱԿ-ի Գլխավոր ասսամբլեայի Հատուկ նիստը թմրամիջոցների վերաբերյալ արդեն կայացել է, և այն տեղի է ունեցել Նյու-Յորքում ապրիլի 19–20-ին: Այնտեղ պետք է քննարկվեին թմրամիջոցների համաշխարհային խնդրի պայքարին առնչվող թեմաները՝ ձեռք բերած հաջողությունները, պայքարի դժվարությունները, իրականացնելիս քննարկումներ Քաղաքական հռչակագրում և գործողությունների ծրագրում թմրամիջոցների դեմ պայքարի միջազգային համագործակցության համար մշակված և ներդրված համալիր և հավասարակշռված ռազմավարության քայլերը: Այս հռչակագրով նախանշվում են այն միջոցները, որոնք պետք է իրագործելն անդամ-պետությունները և այն նպատակները, որոնց պետք է հասնեն 2019թ.-ին:

Այսպիսով թմրամոլության դեմ պայքարի հիմնախնդրի լուծումը քաղաքացիական հանրության և իշխանության միջև բազմակողմ և շարունակական գործընթաց է, որը հնարավորություն կստեղծի թմրամիջոց օգտագործողների առողջության և իրավունքի պաշտպանության խնդիրների և հարցերի շուրջ բաց երկխոսության համար:



## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Наркомания – проблема современности  
<http://vocmp.oblzdrav.ru/narkomania-problema-sovremenosti.html>
2. Мировая проблема наркотиков с позиций общественного здравоохранения  
[https://www.unodc.org/documents/ungass2016//Contributions/UN/WHO/B138\\_11-ru.pdf](https://www.unodc.org/documents/ungass2016//Contributions/UN/WHO/B138_11-ru.pdf)
3. Наркобизнес - глобальная проблема XXI века  
<http://demoscope.ru/weekly/2007/0297/analit01.php>
4. Доклад международного комитета по контролю над наркотиками за 2014 год. ООН, Нью Йорк, 2015г.
5. Թւրքամիջոցների վերաբերյալ ազգային զեկույց 2015թ. ՀՀ առողջապահության նախարարություն

## МЕЖДУНАРОДНЫЕ ПРОБЛЕМЫ ПО БОРЬБЕ С НАРКОМАНИЕЙ ВОЗНИКШИЕ В 21 ВЕКЕ

А.Р. Манвелян, Н.А. Киракосян

### АННОТАЦИЯ

Проблема, стоящая перед международным сообществом по борьбе с наркоманией является чрезвычайно актуальной и императивной. Международные конвенции о контроле над наркотиками направлены на защиту здоровья и благополучия человека, для достижения которых требуется полное осуществление политических, юридических и административных договорных обязательств государства. Разработанные программы необходимо осуществлять путем всеобъемлющего, комплексного и сбалансированного подхода, не упуская ни одного ключевого элемента. Для борьбы с этой проблемой, необходимо разработать реалистичные и практические механизмы, последовательная реализация которых приведет к видимым результатам. Армения также присоединилась к этой борьбе, разработав стратегию по снижению уровня наркомании в стране.

**Ключевые слова:** наркомания, способы борьбы, права человека, Единая конвенция, контроль над наркотиками, основополагающий принципы, стратегия, договорные обязательства, социально-экономическая безопасность.

## 21st CENTURY INTERNATIONAL PROBLEMS OF FIGHT AGAINST DRUG

A.R. Manvelyan, N.A. Kirakosyan

### ABSTRACT

The problem which is facing the international community in the fight against drugs is extremely urgent and imperative. International conventions on drug control are directed to protect human health and prosperity. In order to achieve this goal cooperation and full implementation of political, legal, administrative and contractual obligations of the countries is required. Developed programs should be implemented through a comprehensive, integrated and balanced approach, not missing any key element. To combat this problem, it is necessary to develop realistic and practical arrangements which will lead to visible results. Armenia has also joined the fight by developing a strategy to reduce the level of drug abuse in the country.

**Keywords:** drug addiction, ways to fight, human rights, Single Convention, drug control, basic principles, strategy, contractual obligation, social-economic security.

## ВЫЯВЛЕНИЕ УПОТРЕБЛЕНИЯ НАРКОТИЧЕСКИХ СРЕДСТВ КАК ФАКТОРА РИСКА ПРИ ОБЕСПЕЧЕНИИ ПРОФЕССИОНАЛЬНОГО ОТБОРА

Е.Л. Минасян

### АННОТАЦИЯ

В данной статье рассмотрены проблемы выявления употребления наркотических средств как фактора риска при обеспечении профессионального отбора кадров для поступления на работу. Проанализирован практический опыт применения опроса с использованием полиграфа (ОИП), охватывающий период с 2000 по 2016 годы. Приведенные результаты опросов раскрывают возможность распознавания скрываемой или заведомо искаженной информации у кандидатов при комплектовании надежного кадрового состава. На основе полученных результатов обосновано применение полиграфного тестирования для своевременного выявления употребления наркотических веществ.

**Ключевые слова:** профессиональный отбор, факторы риска, зависимость от наркотических средств, опрос с использованием полиграфа, психофизиологические параметры.

Профессиональный отбор представляет собой совокупность мероприятий, направленных на комплектование кадрового состава лицами, обладающими необходимым уровнем профессиональных знаний и психологических качеств. При этом первичными и наиболее важными являются: патриотизм, честность, законопослушность, культура и достаточный общеобразовательный уровень, способность к объективной самооценке, гибкость и трудолюбие, высокие волевые качества, скромность, дружелюбие, смелость и находчивость, коммуникабельность и др.

Система профессионального отбора кадров состоит из давно отработанных и устоявшихся методик. Но в наши дни практика показала, что применяемые методики профессионального исследо-

вания кадров не всегда позволяют в полной мере объективно определить наличие у конкретного лица негативных личностных особенностей и характеристик, нежелательных или неприемлемых для поступления на конкретную работу.

К наиболее значимым негативным личностным особенностям, которые могут повлиять на окончательное решение при отборе кадров, следует отнести употребление наркотических веществ, пристрастие к алкоголю, наличие судимости, скрываемые болезни, увлечение азартными играми, совершенные ранее преступления, связь с нежелательными организациями или категориями лиц.

Как показала мировая практика, одним из эффективных средств для решения задач по выявлению негативных личностных особенностей в ходе профотбора является современный метод психологических исследований – опрос с использованием полиграфа (ОИП), с помощью которого возможно распознать скрываемую или заведомо искажаемую информацию, своевременно выявить негативные проявления (факторы риска) и истинную мотивацию желания получить конкретную работу.

Работа прибора заключается в «одновременной регистрации нескольких (от 4 до 16) параллельно протекающих физиологических процессов: дыхания, кровяного давления, тремора и проч.» [1], активизирующихся при возбуждении симпатической нервной системы человека, посредством воздействия внешнего раздражителя. В процессе ОИП внешним раздражителем является стимул (вопрос), несущий в себе информативную значимость. Проверка на полиграфе – это комплексное обследование, включающее в себя изучение анкетных данных, предтестовую беседу, тестирование на полиграфе, послетестовую беседу, анализ полиграмм и заключение специалиста.

Полиграф в РА применяется с конца 1999 года, действуя по трем направлениям: полиграфные исследования по кадровым, скрининговым проверкам при зачислении на работу; исследования в уголовно-процессуальном направлении, исследования в рамках оперативной деятельности силовых структур РА [2]. С вышеуказанного времени специалистами опрошено более 3000 ОИП лиц мужского и женского пола в возрасте от 18 до 30 лет.

Проанализировав результаты ОИП, организованных для обеспечения профессионального отбора кадров за 2000–2015г., установлено, что среди опрошенных лиц наиболее часто выявлялись следующие факторы риска (см. Таб. № 1).

Таблица №1

<b>Факторы риска</b>	<b>2000–2015 годы</b>
<i>Зависимость от наркотических средств</i>	220
<i>Зависимость от азартных игр</i>	42
<i>Зависимость от алкоголя</i>	31
<i>Незаконный источник дохода</i>	24
<i>Хранение незарегистрированного оружия</i>	8
<i>Связь с криминальными структурами</i>	7

Также автор статьи заметил объективные закономерности проявления психологических особенностей при выявлении у опрашиваемых скрываемой информации, т.е. факторов риска. В скрининговых ОИП наиболее часто регистрировался фактор риска, связанный с употреблением наркотических средств. При этом необходимо отметить, что наркотически зависимы были лишь 108 кандидатов, а остальные либо пробовали соответствующие средства однократно, либо использовали их в прошлом (см. Таб. № 2).

Во время предтестовой беседы большинство из имеющих наркотическую зависимость исследуемых (61 человека из 108) предпочли полностью отрицать периодическое употребление наркотических средств, не признаваясь, что когда-либо использовали их.

Промежуточное положение занимали исследуемые (88 человек), имевшие опыт неоднократного применения наркотических веществ в прошлом, без выраженной устойчивой зависимости к ним. В то же самое время лица, имевшие опыт лишь однократного употребления наркотических веществ, были более открыты во вре-

мя предтестовой беседы и лишь шестеро из 24-х попытались скрыть истину.

Таблица № 2

<b>Выявление наркозависимости при проведении ОИП</b>									
год	непризнанная наркозависимость	зависимость от нарк. средств признали как		непризнанное употребление в прошлом	употребление нарк. средств в прошлом признали как		непризнанное однократное употребление	употребление нарк. средств признали как однократное	Σ %
		однократное	в прошлом		однократное	в прошлом			
2000	2	1	1	-	1	-	-	-	5 из 107-и, 5%
2001	1	2	1	-	2	1	-	1	8 из 136-и, 6%
2002	2	1	1	2	1	-	1	-	8 из 148-и, 5%
2003	2	1	2	1	1	2	1	1	11 из 157-и, 7%
2004	3	1	1	1	2	1	-	1	10 из 165-и, 6%
2005	3	1	1	2	2	1	1	-	11 из 175-и, 6%
2006	4	2	3	-	1	-	1	1	12 из 184-и, 6%
2007	5	3	-	1	2	1	-	1	13 из 197-и, 7%
2008	4	1	2	2	1	1	1	-	12 из 193-и, 6%
2009	5	2	4	-	1	-	1	-	14 из 195-и, 7%
2010	2	3	-	1	6	2	-	2	15 из 140-и, 11%
2011	4	1	2	2	3	-	-	-	14 из 187-и, 8%
2012	5	2	2	-	7	1	-	1	20 из 190-и, 11%
2013	7	-	1	1	3	-	-	-	13 из 273-и, 5%
2014	6	1	1	5	-	-	-	-	15 из 294-и, 5%
2015	6	1	2	8	9	10	-	10	42 из 300-и, 14%
Σ	<b>61</b>	<b>23</b>	<b>24</b>	<b>26</b>	<b>42</b>	<b>20</b>	<b>6</b>	<b>18</b>	<b>220 из 3050, 7%</b>

В обыденной жизни ложь проявляется как искаженная и недействительная информации, а умалчивание действительности воспринимается как нераскрытая правда. Сесилия Бок определяет термин «ложь», как откровенное искажение действительности, а сокрытие или умалчивание информации определяет как «тайну», утверждая, что у «лжи существует явная негативная презумпция, в то время, как у тайны она может отсутствовать» [3]. Американский исследователь человеческих эмоций, Пол Экман подходит к этому вопросу несколько иначе, считая, что «искажение» и «умалчивание» являются двумя формами проявления лжи. Ученый определяет ложь или обман как действие, которым один человек вводит в заблуждение другого, делая это умышленно, без предварительного уведомления о своих целях [4]. В обоих случаях человек несет ответственность за произнесенную информацию. В действительности, человек в некоторых случаях прибегает ко лжи, пытаясь защитить себя от неприятностей или ожидаемой ответственности, что в данном случае рассматривается автором как проявление защитных механизмов, определение которым дал З.Фрейд [5].

С учетом вышеперечисленного и основываясь на собственных наблюдениях, можно заключить, что проявления лжи, т.е. умалчивание или сокрытие информации об употреблении наркотических средств, во время ОИП у кандидатов проявляются как некоторые механизмы психологической защиты личности. В процессе опроса наиболее часто встречающимися являлись: вытеснение – попытка забыть факт употребления наркотиков (ответ – «Не Помню»); проекция – попытка перевести ответственность от себя на другое лицо (ответ – «Я был пассивным участником, сам не пробовал»), отрицание – стремление не принимать за реальность нежелательные события (ответ – «Никогда не пробовал») и т.д.

При проведении ОИП посредством полиграфа зарегистрированы соответствующие «психофизиологические реакции» [6] человека, ярко описывающие эмоции, переживаемые им вне зависимости от того, умалчивал тестируемый информацию или умышленно искажил ее. Следовательно, любое умышленное недосказание или фальсификация действительности приводит к соответствующим однородным изменениям психофизиологических реакций.

Все заключения по проведенным опросам составлялись на основе проанализированных изменений в показателях а) сердечно-сосудистой системы – «ФПГ» (фотоплетизмограмма); б) дыхательной системы – «ВД» и «НД» (грудной и брюшной дыхательные циклы); в) электрического сопротивления кожи – КГР; г) сокращений гладкой мускулатуры – «Тремор».

Гордон Борланд, руководитель исследовательских программ Института полиграфии МО США, член Американской ассоциации полиграфистов, отмечает, что «точность полиграфа при его применении к лицам, подозреваемым в сокрытии совершенных ими преступлений, лежит в пределах 80–95%, при условии, что испытание проводит хорошо подготовленный, опытный оператор, который использует общепринятую методику и продолжает испытание до тех пор, пока не сможет сделать однозначного вывода».

Основываясь на собственном опыте проведения ОИП, можно заключить, что достоверность полученных данных соответствует зарубежным оценкам и колеблется в пределах от 85 до 95%.

Исходя из вышеизложенного, необходимо отметить рациональность использования полиграфа как средства для диагностики лжи и своевременного распознавания недействительной, искаженной информации при организации мероприятий по профессиональному отбору кадров. Как в государственных, так и в частных структурах целесообразно проводить ОИП для определения надежности самого слабого его звена, которым является человек. Практика показала, что ОИП является действенным методом при выявлении такого фактора риска, как наличие употребления наркотических средств исследуемым.

## ЛИТЕРАТУРА

1. *Холодный Ю.И.* Полиграфы и безопасность. МБ, 1998, 8 с.
2. *Апоян Р.Л., Григорян Г.Е., Минасян Е.Л.* Опыт применения полиграфных тестирований в МНБ РА// 4-я международная научно-практическая конференция ГУВД Краснодарского Края, Сочи, 2000, 16 с.
3. *Vok S. Secrets.* New York: Pantheon, 1982, 15 p.
4. *Экман П.* Психология лжи. Питер, 1999, 22 с.
5. *Дубровина И.В.* Психология. М., 2003, 294 с.



6. Милнер П. Физиологическая психология. «Мир», 1973. СС. 101–104.

## IDENTIFICATION OF USING THE DRUG AS A RISK FACTOR IN ENSURING THE PROFESSIONAL SELECTION OF STAFF MEMBER DURING RECRUITMENT

**E. Minasyan**

### ABSTRACT

The article deals with the problem of identification of using the drug as a risk factor in ensuring the professional selection of staff member during recruitment. The practical experience of using the examination with polygraph covering the period between 2000–2016 is analyzed.

The results of surveys reveals the opportunity to recognize hidden and deliberately distorted information from candidates while recruiting reliable staff. The use of polygraph testing for timely detection of drug addiction is substantiated basing on obtained results.

**Keywords:** professional selection, risk factors, using on narcotic examination with using the polygraph, psychophysiological parameters.

## ԹՄՐԱՍԻԶՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄԸ՝ ՈՐՈՒԵՄ ՌԻՍԿԻ ԳՈՐԾՈՆ, ԱՐՀԵՍՏԱՎԱՐԶ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼԻՄ

**Ե. Մինասյան**

### ԱՍՓՈՓՈՒՄ

Հոդվածում ուսումնասիրվել է թմրամիջոցների օգտագործման բացահայտման խնդիրը՝ աշխատավարժ ընտրություն կատարելիս: Մանրամասն վերլուծվել է պոլիգրաֆի կիրառմամբ հարցման (ՊԿՀ) 2000-ից մինչև 2016թ. ժամանակահատվածում ընկած աշխատանքային փորձը: Ներկայացվել են կատարված հարցումների արդյունքները, որոնք բացահայտել են թեկնածուների կողմից թերասված կամ աղավաղված տեղեկությունները: Հիմնվելով ստացված արդյունքների վրա, ամփոփվել է պոլի-

գրաֆային թեստավորման արդյունավետությունը թմրամիջոցներից կախվածության բացահայտման ժամանակ:

**Հիմնաբառեր**՝ արհեստավարժ ընտրություն, ոիսկի գործոն, թմրամիջոցներից կախվածության բացահայտում, պոլիգրաֆի կիրառմամբ հարցում, հոգեֆիզիոլոգիական չափորոշիչներ:

## ТАКТИКА ПРИМЕНЕНИЯ РОЗЫСКНЫХ СОБАК НА ТРАНСПОРТЕ ПОДГОТОВЛЕННЫХ ПО ПОИСКУ НАРКОТИЧЕСКИХ СРЕДСТВИ ПСИХОТРОПНЫХ ВЕЩЕСТВ

**В.Б. Палиев**

### АННОТАЦИЯ

В данной научной статье рассматриваются вопросы, связанные с тактическими приемами применения розыскной собаки при попытке перемещения наркотических средств и психотропных веществ через границу посредством легкового, железнодорожного, воздушного транспорта.

**Ключевые слова:** незаконный оборот наркотиков, розыскная собака, досмотр автомобильного транспорта, досмотр железнодорожного транспорта, досмотр воздушного судна, досмотр багажа.

Проблема наркотизации населения в России на протяжении длительного времени остается острой проблемой для государства и общества в целом.

Наркотики могут провозиться контрабандным путем через границы многих стран. Слабая защищенность границ, огромный поток нелегальных мигрантов, сложные социально-экономические условия делают Южный регион объектом пристального внимания международного наркобизнеса.

На границе с государствами Закавказья, а это порядка 1300 км, задерживаются, как правило, небольшие партии героина, опия и марихуаны как при ввозе, так и при вывозе из России. Наличие очагов напряженности, связанных с активной деятельностью террористических группировок, подпитываемых из-за рубежа, обуславливает дальнейший рост контрабанды наркотиков через данный участок границы из Турции, Ирана и стран Центральной Азии 700 км границы с Казахстаном в зоне деятельности Южного округа занимают лидирующие позиции в общей статистике задержаний контрабанды

наркотиков. Данная граница, учитывая ее протяженность и слабую защищенность, остается главным направлением, разрабатываемым международными преступными группировками, по использованию территории России для транзитных поставок героина в страны Европы и США. Конечными пунктами доставки наркотиков, поступающих через российско-казахстанскую границу, как и прежде, остаются самые доходные рынки стран Западной Европы, а также крупные города на территории России, в числе которых лидируют Москва и Санкт-Петербург

В Москве, Санкт-Петербурге и других крупных городах доля контрабандных наркотиков составляет 90%. Из стран Центральной и Юго-Восточной Азии в Россию поставляются опий и героин, Китай и Северная Корея – основные поставщики эфедриносодержащих препаратов, из стран Западной и Восточной Европы нелегально ввозятся наркотики синтетической группы, из Латинской Америки – кокаин [1].

Основным методом, с помощью которого можно сократить объем контрабанды наркотиков, является охрана границ и пунктов въезда (осмотр и проверка самолетов, судов, поездов, автомобилей, грузовых транспортных средств, почтовых отправлений, багажа и лиц). При контрабандном перемещении наркотиков на территорию России и через нее методы их сокрытия остаются традиционными. Основными из них по-прежнему являются: сокрытие среди товаров, предметов и продуктов питания, в личных вещах, бытовых приборах, различных изделиях художественного промысла, а также в пустотах автомобильного и железнодорожного транспорта и специально оборудованных для этих целей тайниках.

Основная масса контрабанды наркотиков задерживается при попытке их перемещения автомобильным и железнодорожным транспортом. Именно на эти виды транспорта сегодня приходится основные объемы товаров, перемещаемых через таможенную границу. Эти виды транспорта пользуются особой популярностью и в среде так называемых «частных перевозчиков», выявление которых в многотысячном потоке пассажиров и транспортных средств является весьма сложной задачей. При досмотре любого вида транспорта используется розыскная собака. Кинологами предпочтение отдается

охотничьим породам – у них хорошее обоняние. Кроме того, собака должна быть активной и с легким характером.

*Досмотр легкового автотранспортного средства.* После остановки легкового автотранспортного средства и выключения двигателя кинолог предлагает водителю и пассажирам выйти из машины с личными вещами, оставить двери, капот, багажник, бардачок открытыми. Досмотр производится изнутри салона. Труднодоступные для собаки места осматриваются визуально. Если досмотр внутри машины с помощью собаки невозможен (плохая погода, дорогой салон, то осмотр производится визуально), после этого производится наружный досмотр. Бампер автомобиля, короба, двери, колеса. Если внутри салона есть резкий посторонний запах, то машина проветривается дольше обычного времени. В это время кинолог может проверить ручную кладь водителя и пассажиров или багажа перевозимого в багажнике. Багаж предварительно извлекается и выставляется рядом с автомобилем. Сначала досматривается багажник, затем ручная кладь и багаж. При необходимости пассажиры досматриваются в первую очередь. В ходе работы обращают особое внимание на нарушение агрегатов и узлов в автомобиле, обшивки салона, следы недавнего заворачивания болтов, гаек, на поведение пассажиров при досмотре. Необходимо иметь в виду, что во время работы снаружи по периметру собаки могут поцарапать автомашину когтями. Для этого им на лапы одеваются «чехлы» из мягкого материала.

Практике известны случаи, когда наркотические средства прятались в приспособленных тайниках, например, в стандартных «Жигулях» дополнительно помещали и использовали его для перевозки наркотиков, в запасном колесе автомашины и другие [2].

*Досмотр грузового автотранспортного средства.* После остановки грузового автотранспортного средства и выключения двигателя, сначала производится досмотр снаружи, кабина водителя чаще всего осматривается визуально. С собакой можно проверить двери, колеса, раму, а затем осуществляется досмотр перевозимого груза. По возможности часть груза выгружают или делают проходы для работы животного. Для проверки сыпучих грузов используют щуп или подручные средства. При необходимости водитель и пассажиры досматриваются в первую очередь. В ходе работы обращают особое

внимание на нарушение агрегатов и узлов в автомобиле, обшивки салона, следы недавнего заворачивания болтов, гаек, на поведение пассажиров при досмотре.

